

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հունիսի 2002 թվականի N 794-Ն

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասի «բ» կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել հիվանդությունների առանձին տեսակների դեպքում կիրառման հակացուցումների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անվանացանկը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2002 թ. հունիսի 13  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
հունիսի 6-ի N 794-Ն որոշման

## Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

#### Ի. ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

1. Գրգռիչ (թթու, կծու) համեմունքներ պարունակող, տապակած սննդամթերքը, սուրճը, մուգ թեյը, խորտիկները, պահածոները, թարմ հացը, խմորեղենը, հում և ոչ տրորած բանջարեղենը, մրգերը, ալկոհոլային ու գազով հագեցված ոչ ալկոհոլային ըմպելիքները, պաղպաղակը հակացուցված են խոցային հիվանդության, քրոնիկ գերթթվային գաստրիտների սրացման փուլում:

2. Սույն անվանացանկի 1-ին կետում նշված սննդամթերքը, բացի թեյից, սուրճից, ինչպես նաև կաթը, թթվասերը, ճարպոտ միսը, ճարպոտ ձուկը հակացուցված են աղիքների բորբոքման ժամանակ, երբ գերակշռում է լուծը: Թարմ հացի, խմորեղենի, շոկոլադի, գազով հագեցված և քաղցր հյութերի, ալկոհոլի, սուրճի ու կակաոյի օգտագործումը հակացուցված է աղիքների բորբոքման ժամանակ, երբ գերակշռում է փորկապությունը:

3. Գրգռիչ (թթու, կծու) համեմունքներ պարունակող, տապակած սննդամթերքը, կենդանական ճարպը, ճարպոտ միսը, ճարպոտ ձուկը, պահածոները, սունկը, շոկոլադը հակացուցված են լյարդի և լեղապարկի հիվանդությունների ժամանակ:

4. Սույն անվանացանկի 3-րդ կետում նշված սննդամթերքը, որը հակացուցված է լյարդի, լեղուղիների հիվանդությունների դեպքում, չի կարելի օգտագործել նաև ենթա-ստամոքսային գեղձի բորբոքման ժամանակ:

5. Խմորեղենը, շոկոլադը, խավիարը, ալկոհոլը հակացուցված են ճարպակալման ժամանակ:

6. Ճարպոտ միսը, ճարպոտ ձուկը, խմորեղենը, շոկոլադը, խավիարը, ալկոհոլը, կակաոն հակացուցված են աթերոսկլերոզի, սրտամկանի ինֆարկտի դեպքում:

7. Սուրճի, թեյի, աղ, կծու, թթու պարունակող սննդամթերքի, ալկոհոլի օգտագործումը հակացուցված է հիպերտոնիկ հիվանդության ժամանակ:

8. Գրգռիչ համեմունքներ պարունակող սննդամթերքը, աղի կերակրատեսակները, պահածոները, միս-մսամթերքը, մսաջուրը, ձուկը, կաթնահունց խմորեղենը, լոբազգիները, ալկոհոլը հակացուցված են սուր և քրոնիկ գլոմերուլոնեֆրիտի, երիկամային անբավարարության ժամանակ:

9. Գրգռիչ, աղի կերակրատեսակները, պահածոները, ճարպոտ միսը, ճարպոտ ձուկը, ձուն, շոկոլադը, լոբազգիները հակացուցված են քրոնիկ պոլիարթրիտի, արթրոզների ժամանակ:

10. Շաքար պարունակող մթերքը, շոկոլադը, կոնֆետը, խմորեղենը, ճարպոտ միսը, ճարպոտ ձուկը, խավիարը, պահածոները, բազուկը հակացուցված են շաքարային դիաբետի ժամանակ:

## II. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Մերսումից օգտվելը հակացուցված է սուր բորբոքային պրոցեսների, ջերմության բարձրացման, արյունահոսության, սիրտ-անոթային համակարգի սուր և քրոնիկ հիվանդությունների, միոկարդի սուր ինֆարկտի, արյան հիվանդությունների, հոգեվիճակի զրգռվածությամբ կամ արտահայտված խանգարումներով ընթացող հոգեկան հիվանդությունների, պալարախտի՝ զարգացման ակտիվ փուլում, տարբեր տեղակայմամբ բարորակ ու չարորակ ուռուցքների, սրտխառնոցի, փխսման, որովայնի շոշափման ժամանակ անհայտ բնույթի ցավերի առկայության դեպքում:

12. Ասեղնաբուժությունից օգտվելը հակացուցված է ուռուցքային, վեներական, վարակիչ և արյան շրջանառության համակարգի հիվանդություններով տառապող անձանց:

13. Ռոդոնային և այլ նախապահպանական ու բուժիչ լոգարաններից օգտվելը հակացուցված է մաշկային վարակիչ, սիրտ-անոթային համակարգի սուր և քրոնիկ հիվանդություններով, պալարախտի զարգացման ակտիվ, ինչպես նաև սրացման փուլում գտնվող բոլոր քրոնիկ ու նյարդահոգեկան հիվանդություններով տառապող անձանց:

14. Ֆիզիկական բուժման միջոցները հակացուցված են չարորակ ուռուցքներով, արյան հիվանդություններով (հեմոֆիլիա, թրոմբոցիտոպենիա, Վերգիոֆի հիվանդություն), հոգեւնյարդային, թոքերի սուր բորբոքային հիվանդություններով տառապող անձանց, արյունահոսության հակում ունեցող խոցային հիվանդության, համակարգային կարմիր գայլախտի, սուր և ենթասուր դերմատոմիոզիտի, ակտիվ պալարախտի, ցանցաթաղանթի շերտազատման, գլաուկոմայի, ցրված սկլերոզի, սիրինգոմիելիայի, բրոնխոէկտազի դեպքում:

15. Լազերային բուժումը հակացուցված է չարորակ ուռուցքներով, արյան համակարգային հիվանդություններով տառապող անձանց, պալարախտային ինտոքսիկացիայի, երիկամների ֆունկցիոնալ անբավարարության, ռիթմի խանգարումների, աորտայի անևրիզմայի, էնֆիզեմայի, շաքարային դիաբետի դեպքում:

16. Բոլոր տեսակի ապարատային գործողությունները հակացուցված են չարորակ ուռուցքներով, արյան համակարգային հիվանդություններով տառապող անձանց, ակտիվ պալարախտի, միոկարդի սուր ինֆարկտի դեպքում:

## III. ՄԱՐՋԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

17. Մարմնամարզական (տրենաժորային) դահլիճների ծառայություններից օգտվելը հակացուցված է հետարյունազեղումային և հետինֆարկտային վիճակների դեպքում՝ մեկ տարվա ընթացքում, հիպերտոնիկ հիվանդությամբ, զանգուղեղի արյան շրջանառության խանգարումներով, սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով տառապող անձանց՝ սրացման փուլում, սուր բորբոքային պրոցեսների, ջերմության բարձրացման, արյունահոսության, սրտխառնոցի, փսխսման, որովայնի շոշափման ժամանակ ի հայտ եկած անհայտ բնույթի ցավերի, պալարախտի զարգացման ակտիվ փուլում, տարբեր տեղակայմամբ բարորակ և չարորակ ուռուցքների դեպքում:

18. Խաղահամալիրների կառույցներից և ատրակցիոններից օգտվելը հակացուցված է նյարդահոգեկան, ուղեղային անոթների սկլերոզով, զանգուղեղի արյան շրջանառության խանգարումներով, սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով տառապող անձանց:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**